



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 թվականի N 09-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Արաքս համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:


Ավագանու անդամներ

կողմ- 18

դեմ- 0

ձեռնպահ-0

1. Ղազարյան Ղազար
2. Հարությունյան Վահրամ
3. Համբարյան Մելանյա
4. Նահապետյան Տիգրան
5. Շահինյան Շահեն



6. Մնացականյան Գայանե *Գայ*

7. Վարդանյան Գեղամ *Գեղ*

8. Ղուկասյան Արմեն *Արմ*

9. Մակարյան Մարյամ *Մար*

10. Միրզախանյան Վարդան *Վար*

11. Մակարյան Ալինա *Ալ*

12. Մարտիրոսյան Նարեկ *Նար*

13. Կիրակոսյան Արմինե *Արմ*

14. Մելքոնյան Հակոբ *Հակ*

15. Մկրտչյան Սարիբեկ *Սար*

16. Պողոսյան Արմինե *Արմ*

17. Սեփիանյան Սևան *Սեփ*

18. Մանուկյան Աննա *Ան*

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման գործընթացը, հաշվառման գրանցամատյանների վարման կարգը, գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

- 1) տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),
- 2) տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),
- 3) տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),

4) տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 4):

4. Գրանցամատյանները վարվում են Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) ֆինանսական բաժնում՝ բաժնի պետի պատասխանատվությամբ:

5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը կարող է իրականացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով) ձևով,

7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

- 1) գրանցամատյանի վարման տարեթիվը,
- 2) տուրքի և (կամ) վճարի տեսակը,
- 3) գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը,
- 4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անուն, ազգանունը (ստորագրությունը),
- 5) տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,
- 6) համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),
- 7) տուրքի և (կամ) վճարի չափը,
- 8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տուրք և (կամ) վճար,
- 9) տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձանց դեպքում գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝
 - ա. ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),
 - բ. հաշվառման հասցեն,
 - գ. անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

10) տուրք և (կամ) վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 3, Ձև 4) ներառվում են նաև՝

ա. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպչիրավական տեսակը,

բ. գրանցման հասցեն,

գ. գործունեության հասցեն,

դ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը,

ե. հարկ վճարողի հաշվառման համարը.

9. Համապատասխան բաժիններում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են բաժնի պետի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:

10. Գրանցամատյաններ կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տուրք և (կամ) վճար.

11. ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

12. Գրանցամատյանների Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը և Ձև 4-ը կցվում են:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՇՎԱՅԻՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԿՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

« _____ » _____ 20__թ

- 1. Տեղական տուրքի տեսակը՝
- 2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համատախան բաժնի անվանումը՝
- 3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝

N	Տեղական տուրք վճարողների			Տեղական տուրք վճարողի հաշվառման հասցեն	Տեղական տուրք վճարողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները	Համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական տուրք	Տեղական տուրքի չափը	Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք
	Ազգանունը	Անունը	Հայրանունը					
1	2			3	4	5	6	7
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								
10								
11								
12								
13								
14								
15								
16								

**ՀԱՇՎԱՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԿՃԱՐ ԿՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ**

« _____ » _____ 20__թ

1. Տեղական վճարի տեսակը՝
2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համատեղական բաժնի անվանումը՝
3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝

N	Տեղական վճար վճարողների		Տեղական վճար վճարողի հաշվառման հասցեն	Տեղական վճար անձը հաստատող փաստաթղթի տվյալները	Համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական վճար	Տեղական վճարի չափը	Ժամանակահատված, որի համար վճարվել է տեղական վճար
	Ազգանունը	Անունը					
1	2		3	4	5	6	7
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
11							
12							
13							
14							
15							
16							

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Արաքս համայնքում տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների կատարումով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արաքս համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվել է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի գործառույթների կատարման շրջանակներում, մինչդեռ ոլորտի օրենսդրությունը սահմանում է, որ համայնքի ղեկավարը հաշվառումը, որի կարգը պետք է հաստատի համայնքի ավագանին, իրականացնում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում, որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների: Առաջադրված խնդիրն է՝ ավագանու որոշմամբ հաստատել համայնքի տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

«Արաքս համայնքում տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշումը ընդունելու արդյունքում ակնկալվում է օրենսդրությանը համապատասխան հաշվառել տեղական տուրք և (կամ) վճար վճարողներին, ըստ կարգի վարել հաշվառման գրանցամատյանները:

4. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Արաքս համայնքում տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշումը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ և ուղղված է կարգավորելու «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումներով իրականացվող իրավահարաբերությունները:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Արաքս համայնքում տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Արաքս համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արաքս համայնքում տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ